ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ
UNION OF BUILDERS OF ARMENIA

ՀՇՄ 190
11.11.2025թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Գևորգ Պապոյանին

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Ներկայացնում ենք Հայաստանի շինարարների միության (ստեղծված 1996թ. որպես իրավաբանական անձանց միավորում, այնուհետև՝ 2019թ. վերագրանցված որպես հասարակական կազմակերպություն) հայտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ:

Առդիր՝

1. Կազմակերպության պետական գրանցման վկայականի պատճենը – 2 թերթ
2. Կանոնադրության պատճենը – 15 թերթ
3. Խորհրդի աշխատանքներին մասնակցող անձի տվյալները – 1 թերթ
4. ՀՀ էկոնոմիկայի նախարարության, «Հայաստանի շինարարների միություն» և «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» ՀԿ-ների հետ հաստատված համագործակցության հուշագրի պատճենը – 4 թերթ

Հարգանքով՝

ՀՇՄ նախագահ՝ Վ. Հարությունյան

0002, Երևան, Բուզանդի 99
Հեռ.՝ (374 10) 50 18 27
Էլ. փոստ՝ contact@buildersunion.am

0002, Ереван , ул. Бузанда 99
Тел.: (374 10) 50 18 27
Эл. почта: contact@buildersunion.am

0002, Yerevan, 99 Buzand Str.
Tel.: (374 10) 50 18 27
E-mail : contact@buildersunion.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ըստ 2024-12-27

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.1058929
Հիմնադրման տարի	2019
Գրանցման ամսաթիվ	2019-02-15
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	37469915
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00059558
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	178929
Էլ. փոստ	hayshin2006@mail.ru
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ԲՈՒԶԱՆԴԻ Փ. / Շ / 99 ԿԵՆՏՐՈՆ 0002 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	+374 91 432241

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ՎԱՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԻԽԱԻԼԻ
Անձնագրային տվյալներ	AR0293960 2017-05-16 011
Հասցե	ԲԱՅՐՈՆԻ Փ. / Շ / 1/1 / ԲՆ. 20 ԿԵՆՏՐՈՆ 0009 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻԱՄ (264.150.04900)**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2023-02-09	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2024-01-10	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2024-12-27	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տեղեկությունների գրառում** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող՝ ստորագրություն **ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԲԻԶՆԵՍ ՍՈԼՈՒՇՆՍ**

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **27-12-2024**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է 19.11.2024թ.
Բաղկացած է 15 թերթից
Տպագրված է 5 օրինակ

Օրինակ N 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի շինարարների միություն»
հասարակական կազմակերպության V
համագումարի «20» նոյեմբեր 2024թ.
որոշմամբ (արձանագրություն N 01)

Նախագահ՝

_____ Վահան Հարությունյան
(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

«15» փետրվարի 2019թ.

Գրանցման համար
211.171.1058929

Հարկ վճարողի հաշվառման համար
00059558

15.02.2019թ. գրանցված կանոնադրության
թիվ ------ փոփոխությունը գրանցվել է
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կողմից 27.12. 2024թ.

Աշխատակից

_____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ – 2024

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպությունը, (այսուհետ՝ Միություն) Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որը միավորում է շինարարական ոլորտի կազմակերպություններին և ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:
«Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է «Հայաստանի շինարարների միություն» իրավաբանական անձանց միության (գրանցման համար՝ 264.150.04900 գրանցված՝ 21.12.1999թ.) ՀՀ օրենսդրության համաձայն վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը:
2. Միությունն իր գործունեությունը կազմակերպում է Սահմանադրության, Քաղաքացիական օրենսգրքի, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության համաձայն:
3. Միության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:
4. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Միության պարտավորությունների համար:
5. Միությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
6. Միության անդամները պատասխանատու չեն Միության պարտավորությունների համար, իսկ Միությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:
7. Միությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
8. Միության գտնվելու վայրն է՝ 0002, ՀՀ, ք. Երեւան, Բուզանդի 99 շենք:
9. Միության անվանումն է՝
հայերեն- «Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպություն
ռուսերեն - "Союз строителей Армении" Общественная Организация
անգլերեն - "Union of builders of Armenia" Public Organization:
10. Միության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից եւ դադարում է լուծարման ավարտի պահից:

II. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Միության գործունեության առարկան եւ նպատակն է.

1) պաշտպանել եւ ներկայացնել Միության անդամների միացյալ շահերը պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական եւ միջազգային կազմակերպություններում, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր եւ պատասխանող,
2) նպաստել շինարարական համալիրի կազմակերպությունների միջեւ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման համար,
3) մասնակցել Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության մասին օրենսդրական եւ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը եւ դրանց հասարակական փորձաքննությանը եւ օրենքով սահմանված քաղաքաշինական այլ գործառույթների,
4) Միության անդամներին ապահովել ՀՀ եւ արտասահմանյան քաղաքաշինական գործունեության մասին տեղեկատվական նյութերով, կազմակերպել հրատարակչական աշխատանքներ,
5) նպաստել ճարտարապետության եւ շինարարական գիտությունների զարգացմանը՝ գիտական աշխատանքները հրատարակելու, արդիական մշակումների գործնական կիրառմանը օժանդակելու միջոցով,
6) իրականացնել խորհրդատվական ծառայություն քաղաքաշինական, տնտեսագիտական, ֆինանսական, հաշվապահական, իրավաբանական եւ մարկետինգային հարցերով,
7) մշակել եւ իրականացնել ծրագիր՝ Միության անդամ կազմակերպությունների աշխատողների վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ուղղությամբ,
8) կազմակերպել սեմինարներ, գիտաժողովներ, նորագույն արտադրատեսակների շնորհանդեսներ,
9) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

12. Միությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը եւ գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:
13. Միությունը օրենքով սահմանված կարգով կարող է զբաղվել ճարտարապետաշինարարական գիտաարտադրական ամսագրի հրատարակմամբ, ստեղծել շինարարական տեղեկատվական, շինարարական կադրերի վերապատրաստման եւ որակավորման բարձրացման կենտրոններ:

III. ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Միությունն իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու եւ իրականացնելու գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով եւ (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու եւ անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր եւ իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը եւ իրավաբանական անձի կարգավիճակը.

Ձեռնարկատիրական գործունեությունը Միությունը կարող է իրականացնել ինչպես անձամբ, այնպես էլ կորպորատիվ հիմունքներով՝ Միության անդամ կազմակերպությունների հետ միասին, իրականացնելով նաև համակարգողի պարտականություններ.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

15.Միությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների հաշվառումը.

2) «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը.

4) «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

5) Միության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Միության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ

տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
6) Միության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.
7) իր գործունեության եւ գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Միության նախագահի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

IV. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Միության անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների կազմակերպություններ, ինչպես նաեւ օտարերկրյա առեւտրային այն կազմակերպությունները, որոնք զբաղվում են քաղաքաշինական գործունեությամբ, շինարարական իրերի ու շինանյութերի արտադրությամբ եւ դրանց ծառայություններ մատուցող հարակից կազմակերպությունները, ինչպես նաև շինարարական ոլորտին առնչվող յուրաքանչյուր կազմակերպություն, որոնք ընդունում են սույն կանոնադրությունը եւ կատարում Միության անդամների համար սահմանված պարտավորությունները:
17. Միության անդամի ընդունելությունը կատարվում է Միության խորհրդի որոշմամբ:
18. Միությանն անդամակցելու դիմումը կարող է մերժվել, եթե՝
1) դիմորդ կազմակերպությունը չի համապատասխանում սույն կանոնադրության պահանջներին.
2) դիմորդը վատ համբավ ունի, եւ նրա անդամակցությունը կարող է վնասել Միության հեղինակությանը:
19. Միության յուրաքանչյուր անդամ օգտվում է մեկ ձայնի իրավունքից՝ անկախ իր ներկայացուցիչների քանակից:
20. Միության անդամ դառնալ ցանկացող անձը պարտավոր է՝
1) ներկայացնել Միության տնօրենին դիմում և իրավասու մարմնի որոշում,
2) ծանոթ լինել Միության կանոնադրությանը եւ ստանձնել պարտավորություն կանոնադրության պահանջները կատարելու վերաբերյալ,
3) ներկայացնել տեղեկանք իր գործունեության հիմնական տեսակների ու ցուցանիշների մասին, եթե այդպիսիք առկա են,
4) կատարել մուտքավճար եւ ամենամյա անդամավճար վճարելու պարտավորություն:
21. Միության տնօրենն ուսումնասիրում է դիմորդի կողմից ներկայացված փաստաթղթերը եւ ներկայացնում եզրակացություն Միության խորհրդի առաջիկա նիստին: Խորհուրդը եզրակացության հիման վրա որոշում է ընդունում Միությանն անդամակցելու վերաբերյալ:
22. Միության խորհրդի կողմից իրավաբանական անձանց անդամակցության վերաբերյալ որոշման կայացման մասին գրավոր տեղեկությունը ստանալուց հետո դիմորդը 15 օրվա ընթացքում պարտավոր է միանվագ վճարել մուտքավճար 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

23. Միության անդամության տարեկան վճարը սահմանվում է՝ ելնելով Միության անդամ կազմակերպության հաշվետու տարվա իրացման շրջանառության ծավալի (այդ թվում՝ նախագծման, շինմոնտաժային, շինարտադրության, շինարարական իրերի եւ շինանյութերի մեծածախ, մանրածախ առեւտուր եւ այլ ծառայությունների մատուցման) 0.2%-ի չափով, բայց ոչ պակաս 100.000 (մեկ հարյուր հազար) դրամից, եւ ոչ ավելի 1000.000 (մեկ միլիոն) դրամից:
Ընդ որում, 100.0 հազ. դրամ անդամավճարը Միության անդամը պարտավոր է միանվագ մուծել տարեսկզբին՝ մինչեւ հունվարի 31-ը, իսկ տարեկան անդամավճարի նվազագույն չափը գերազանցող մասը՝ մինչեւ տվյալ տարվա հուլիսի 20-ը՝ առաջին կիսամյակի արդյունքներով, մինչեւ հաջորդ տարվա հունվարի 20-ը՝ երկրորդ կիսամյակի արդյունքներով:
24. Միության անդամները կանոնադրության 23-րդ կետով սահմանված անդամավճարներից բացի Միությանը կարող են նվիրատվության կարգով տրամադրել նաեւ այլ դրամական կամ գույքային միջոցներ:
25. Միության այն անդամը, որը սույն կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունները պարբերաբար չի կատարում, կամ ոչ պատշաճ ձեւով է կատարում, կամ իր գործողություններով կամ անգործությամբ խոչընդոտում է Միության գործունեությանը, կամ վատ համբավ ունի, կամ նրա անդամակցությունը կարող է վնասել Միության հեղինակությանը, կարող է Միության խորհրդի որոշմամբ հեռացվել Միության անդամությունից:
26. Միության անդամության դադարեցման համար կարող են հիմք հանդիսանալ Միության անդամի դիմումը, լուծարումը կամ սնանկ ճանաչվելը:
27. Անդամության դադարեցման մասին որոշումը Միության տնօրենի եզրակացության հիման վրա ընդունվում է Միության խորհրդի կողմից:

V. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

28. Միության անդամն իրավունք ունի՝
1) մասնակցել Միության համագումարներին, ընտրվելու դեպքում նաեւ խորհրդի աշխատանքներին,
2) ընտրվել Միության ընտրովի մարմինների (Միության խորհրդի, վերստուգող հանձնաժողովի) կազմում,
3) մասնակցել Միության գործունեության հետ կապված հարցերի լուծմանը, առաջարկություններ ներկայացնել Միության ընտրովի մարմիններին,
4) ստանալ տեղեկություններ Միության գործունեության մասին,
5) անվճար օգտվել Միության կողմից մատուցվող ծառայություններից, տեղեկատվական նյութերից,
6) ծանոթանալու Միության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
7) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Միության մարմինների որոշումները: Միության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն

իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,
8) Միությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Միության կանոնադրության փոփոխությունների, Միության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,
9) ներկա գտնվել Միության համագումարին լիազորված անձի միջոցով.
10) իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:
29. Միության անդամը պարտավոր է՝
1) մասնակցել Միության համագումարի աշխատանքներին,
2) նպաստել Միության հեղինակության բարձրացմանը,
3) մուծել մուտքավճար եւ անդամավճարներ նախատեսված ժամկետներում,
4)կատարել Միության կանոնադրական պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
5) աջակցել Միության անդամության համալրմանը,
6) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,
7) պահպանել Միության գաղտնիքները,
8) օժանդակել Միությանը նրա կանոնադրական խնդիրների իրականացման գործում,
9) իր գործունեության տեսակը փոխելու կամ ավելացնելու դեպքում ներկայացնել համապատասխան տեղեկանք:

VI. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

30. Միության կառավարման մարմիններն են Միության համագումարը, Միության խորհուրդը, Միության նախագահը և Միության տնօրենը:
31. Միության կառավարման բարձրագույն մարմինը Միության անդամների համագումարն է, որն ունի Միության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունք:

32. Միության համագումարի իրավասությանն են պատկանում՝
1) Միության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների եւ լրացումների կատարումը, կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատումը,
2) Միության վերակազմակերպումը,
3) Միության լուծարումը,
4) Միության կառուցվածքի հաստատումը,
5) Խորհրդի կազմի ընտրությունը եւ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (կազմալուծումը),
6) Վերստուգող հանձնաժողովի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը եւ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

7) Միությանն անդամակցելու համար մուտքավճարների չափի եւ անդամավճարների չափի ու դրանց վճարման պարբերականության հաստատումը,
8) Հինգ տարին մեկ անգամ Գործադիր մարմնի կողմից Համագումարի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների, Կազմակերպության հաշվապահական հաշվառման և Կազմակերպության այլ մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունների հաստատումը,
9) Միության գործունեության տարեկան արդյունքների եւ հաշվեկշռի հաստատումը,
10) Միության բյուջեի կատարողականի վերջնական հաստատումը,
11) Այլ իրավաբանական անձ ստեղծելու, այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշումների ընդունումը,
12) Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունների դադարեցումը:

33. Միության համագումարը կարող է լուծել նաեւ սույն կանոնադրությամբ նախատեսված Միության գործունեությանը վերաբերող կամ իր նախաձեռնությամբ քննարկման ընդունված այլ հարցեր: Միության համագումարի իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող փոխանցվել Միության կառավարման մարմինների որոշմանը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:
34. Համագումարը կարող է հրավիրվել հերթական կամ արտահերթ կարգով:
35. Հերթական համագումարը հրավիրվում է Միության խորհրդի կողմից 5 (հինգ) տարին մեկ անգամ, անդամների համատեղ հավաքի ձևով:
36. Արտահերթ համագումարը կարող է հրավիրվել Միության նախագահի, խորհրդի, վերստուգող հանձնաժողովի, ինչպես նաեւ Միության անդամների 20 տոկոսի պահանջով:
37. Միության համագումարն սկսելուց առնվազն 20 օր առաջ համագումար հրավիրողը գրավոր ծանուցագիր է ուղարկում Միության անդամներին կայանալիք համագումարի մասին՝ նշելով դրա անցկացման ժամանակը, վայրը եւ օրակարգը:
38. Միության անդամներն իրավունք ունեն օրակարգի վերաբերյալ իրենց առաջարկությունները ներկայացնել համագումարն սկսելուց ոչ ուշ, քան 10 օր առաջ:
39. Համագումարն իրավասու է (քվորում ունի), եթե դրան ներկա են Միության անդամների 50 (հիսուն) տոկոսից ավելին: Համագումարի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:
Միության խորհրդի կազմի ընտրությունները կարող են անցկացվել ինչպես փակ, այնպես էլ բաց քվեարկությամբ՝ համագումարի պատվիրակների՝ անդամ կազմակերպությունների ներկայացուցիչների որոշմամբ: Պատվիրակների քվոտան սահմանում է Միության խորհուրդը:
40. Միության կանոնադրության հաստատման, դրանում փոփոխությունների եւ լրացումների կատարման, կանոնադրության նոր խմբագրությամբ հաստատման, Միության վերակազմակերպման ու լուծարման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Միության անդամների ընդհանուր ձայների թվի 2/3-ով, իսկ մնացած բոլոր հարցերի

վերաբերյալ որոշումներն ընդունվում են համագումարին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

41. Համագումարում նախագահում է Միության նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Միության խորհրդի անդամներից որեւէ մեկը: Միության նախագահը ստուգում է Միության անդամների ներկայացուցիչների մասնակցության իրավասությունը եւ քվորումը:

42. Համագումարի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը կազմվում է նիստերի կայացման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որոնք ստորագրվում են Միության նախագահի եւ նիստի քարտուղարի կողմից: Միության անդամներն իրավունք ունեն անվճար ստանալու Համագումարի նիստերի արձանագրությունների պատճենները կամ դրանց քաղվածքները:

43. Միության խորհուրդը մշտապես գործող կոլեգիալ կառավարման մարմին է, ղեկավարում է Միության գործունեությունը համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում:

44. Խորհուրդն ընտրվում է 21 (քսանմեկ) անդամից, 5 (հինգ) տարի ժամկետով: Խորհրդի անդամը կատարում է սույն կանոնադրությամբ նախատեսված եւ խորհրդի կողմից իր վրա դրված պարտականությունները, մասնակցում է խորհրդի նիստերին եւ Միության կողմից նախաձեռնվող միջոցառումներին:

45. Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ Միության նախագահի կողմից, ինչպես նաեւ խորհրդի անդամների 1/3-ի կամ վերստուգող հանձնաժողովի պահանջով:

46. Խորհուրդն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների 50 (հիսուն) տոկոսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Միության նախագահի ձայնը համարվում է վճռորոշ:

47. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի կայացման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Խորհրդի արձանագրությունը ստորագրվում է Միության նախագահի եւ նիստի քարտուղարի կողմից:

48. Խորհուրդը հաշվետու է Միության համագումարի առջև:

49. Միության խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) Միության գործունեության և զարգացման ծրագրերի հաստատումը,

2) Միության բյուջեի եկամուտների եւ ծախսերի ընդհանուր սահմանաքանակի հաստատումը,

3) Միության նոր անդամների անդամակցության եւ անդամության դադարեցման մասին որոշման ընդունումը,

4) հաշվետու տարվան հաջորդող առաջին եռամսյակի ընթացքում Միության բյուջեի կատարողականի հաստատումը, որից հետո ապահովում է դրա ներկայացումը Միության համագումարի հաստատմանը,

5) օրենսդիր եւ գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքաշինական գործունեության բարելավման, շինարարական շուկայի

կարգավորման, Միության անդամների շահերի պաշտպանության վերաբերյալ առաջարկությունների եւ հայտարարությունների ներկայացումը,
6) իր կազմից Միության նախագահի ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վերջինիս ներկայացմամբ՝ Միության տնօրենի ընտրությունը, որի վերաբերյալ համապատասխան ծանուցումներ են ուղարկվում Միության անդամներին՝ բացառությամբ նախագահի և տնօրենի,
7) Միության առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
8) Միության պաշտոնական մամուլի միջոցի գլխավոր խմբագրի ընտրությունը եւ լիազորությունների դադարեցումը,
9) Միության պաշտոնական մամուլի միջոցի խմբագրական խորհրդի եւ հանձնախմբի կազմերի հաստատումը եւ փոփոխումը,
10) Միության պարգեւների (միության պատվավոր նախագահ, անդամ, մեդալներ, շնորհակալագրեր) շնորհումը,
11) Հայաստանի Հանրապետության պետական, կառավարական, գերատեսչական պարգեւների (շնորհակալագրեր, պատվոգրեր, մեդալներ, հուշամեդալներ) և պատվավոր կոչումների երաշխավորագրերի ներկայացումը,
12) Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,
13) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորին), եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի ընտրությունը,
14) Կազմակերպության ռազմավարության հաստատումը,
15) Օրենքով, սույն կանոնադրությամբ եւ Միության Համագումարի կողմից իրեն հանձնարարված բոլոր այլ հարցերի լուծումը:
50. Միության խորհրդի այն անդամը, ով սույն կանոնադրությամբ կամ Միության խորհրդի կողմից իր վրա դրված պարտականությունները պարբերաբար չի կատարում կամ ոչ պատշաճ ձեւով է կատարում, կամ իր գործողություններով կամ անգործությամբ խոչընդոտում է Միության գործունեությանը, կամ վատ համբավ ունի, կամ նրա անդամակցությունը կարող է վնասել Միության հեղինակությանը, կարող է Միության խորհրդի անդամների որոշմամբ հեռացվել Միության խորհրդի անդամությունից:
51. Միության խորհրդի անդամի հեռացման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Միության խորհրդի անդամների ընդհանուր ձայների թվի 2/3-ով, իսկ մնացած բոլոր հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
52. Միության խորհրդի անդամության դադարեցման համար կարող են հիմք հանդիսանալ Միության խորհրդի անդամի դիմումը կամ այն Միության անդամի հեռացումը կամ անդամության դադարումը, որին ներկայացնում է Միության խորհրդի տվյալ անդամը:
53. Միության նախագահը ղեկավարում, կազմակերպում եւ պատասխանատվություն է կրում Միության խորհրդի աշխատանքների համար, իրավասու է առանց լիազորագրի հանդես գալ Միության անունից: Միության նախագահին ընտրում են Միության խորհրդի

անդամները՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, 5 (հինգ) տարի պաշտոնավարման ժամկետով՝ բացառությամբ առաջին նախագահի, որը ընտրվում է հիմնադիր համագումարի կողմից:

54. Միության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Միության խորհրդի նախագահը:

55. **Միության նախագահը գործադիր մարմինն է՝**

1) հրավիրում եւ վարում է Միության համագումարները Միության խորհրդի նիստերը, ստորագրում դրանց արձանագրությունները, ապահովում է համագումարի և խորհրդի որոշումների կատարումը,

2) կատարում է Միության խորհրդի անդամների միջեւ պարտականությունների բաշխում, համակարգում նրանց աշխատանքները,

3) համակարգում է Միության խորհրդի, Միության տնօրենի գործունեությունը,

4) կազմակերպում է Միության գործունեության հեռանկարային ուղղությունների մշակումը, հաստատում է հաշվետվությունները, տալիս է լիազորագրեր,

5) ղեկավարում է Միության ընթացիկ գործունեությունը,

6) հաստատում է Միության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը,

7) հաստատված բյուջեի ընդհանուր սահմանաքանակների ներքո սահմանում է առանձին ծախսային հոդվածների մեծությունը,

8) ներկայացնում է Միությունը Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում:

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է Համագումարի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ Վերստուգող հանձնաժողովի եզրակացության հիման վրա ներկայացնում է Համագումարի հաստատմանը,

11) հաստատում է կազմակերպության գործառույթները, կանոնակարգում է ներքին փաստաթղթերը:

56. Միության նախագահը իրականացնում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով չարգելված, սույն կանոնադրությամբ եւ Միության համագումարի, Միության խորհրդի կողմից սահմանված այլ իրավասություններ:

1) Միության նախագահը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Միության նախագահը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Միության նախագահը չի կարող մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը:

2) Այն պարագայում, երբ Միության նախագահը ընտրվելու պահին հանդիսանում է որևէ կուսակցության անդամ, ապա ընտրվելուց հետո՝ 1 ամսյա ժամկետում, պարտավոր է դադարեցնել իր անդամակցությունը տվյալ կուսակցությանը:

57. Միության գործադիր աշխատանքները ղեկավարում է Միության տնօրենը, որը նշանակվում է Միության խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

58. **Միության տնօրենը առանց լիազորագրի հանդես գալու իրավասություն ունեցող անձ է՝**

1) ապահովում է Միության համագումարի, Միության խորհրդի, Միության նախագահի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Միության ցանկացած չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Միության անունից,

3) բանկերում բացում է Միության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

5) իրականացնում է օրենքով և Միության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

59. Միության տնօրենը չի կարող նշանակվել Միության խորհրդի կազմից:

VII. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆԸ

60. Միության ղեկավար մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Միության վերստուգող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

61. Միության վերստուգող հանձնաժողովն ընտրվում է Միության համագումարի կողմից հինգ տարի ժամանակով՝ ոչ պակաս, քան 3 անդամից: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

62. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձեւով, որոնք հրավիրվում են տարեկան երկու անգամ: Հանձնաժողովի անդամների մեկ երրորդի կամ Միության նախագահի պահանջով կարող են հրավիրվել նաեւ արտահերթ նիստեր:

63. Միության վերստուգող հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել եւ որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

64. Վերստուգող հանձնաժողովը հետեւում է Միության համագումարի որոշումների կատարմանը, Միության գույքի պահպանմանը, ստուգում է Միության փաստաթղթերը տարին մեկ անգամ, այդ թվում՝ հաշվեկշիռը, ծանոթանում է Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ է ներկայացնում նրա մարմիններին, ինչպես նաեւ հետեւում է այլ գործունեության իրականացմանը:

65. Վերստուգող հանձնաժողովը պարտավոր է իր հաշվետվությունը ներկայացնել Միության համագումարին Միության գործունեության արդյունքների, հաշվեկշռի, գույքի պահպանման եւ այլ ամփոփ տվյալների մասին:

66. Վերստուգող հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Միության խորհրդի անդամները, նախագահը և տնօրենը:

67. Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Միության համագումարին: Միության համագումարին ներկայացվելիք հաշվետվությունը պատրաստելուց հետո 5 (հինգ) օրվա

ընթացքում Վերստուգող հանձնաժողովը պետք է ներկայացնի Միության խորհրդի քննարկմանը:
Միության խորհուրդը նշված հաշվետվությունը հնարավորինս սեղմ ժամկետում պետք է դարձնի քննության առարկա, որից հետո կարող է դիտողություններ ներկայացնել:
Վերստուգող հանձնաժողովը Միության խորհրդի դիտողությունները պետք է քննի 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում եւ դրանք հիմնավոր համարելու դեպքում Միության համագումարին ներկայացվելիք հաշվետվությունը ենթարկի համապատասխան փոփոխությունների:
Միության խորհրդի դիտողություններն անհիմն համարելու դեպքում Վերստուգող հանձնաժողովը դրանք պետք է կցի իր հաշվետվությանը եւ ներկայացնի Միության համագումարին:

VIII. ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

68. Միությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
69. Միությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ եւ շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր եւ օրենքով չարգելված այլ գույք: Միության սեփականության իրավունքների օբյեկտներն են նաև աշխատանքները եւ ծառայությունները, տեղեկատվությունը, մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն), ոչ նյութական արժեքները:
70. Միության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
1) Միության անդամների ներդրումները,
2) Միությանն անդամակցության մուտքավճարները եւ անդամավճարները,
3) Միության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,
5) դրամական մուտքերը պետական բյուջեից,
6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,
7) իրավաբանական, ֆիզիկական անձանցից անհատույց նվիրատվությամբ, կտակի, հանգանակության եւ այլ ձեւերով ստացված դրամական միջոցները ու նյութական արժեքները,
8) Միության օգտին անցկացվող միջոցառումներից ստացվող եկամուտները,
9) օրենքով չարգելած այլ միջոցներ:
71. Միության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրականացման համար: Միության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

72. Միության անդամների Միությանը հանձնած դրամը եւ գույքը Միության սեփականությունն է: Միության անդամները Միությանը որպես սեփականություն հանձնած գույքի՝ ներառյալ անդամավճարների նկատմամբ իրավունքներ չեն պահպանում:
73. Միությունն օրենքով եւ իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում եւ օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:
74. Միության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատական կարգով օրենքով նախատեսված դեպքերում:

IX. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

75. Միությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ եւ հիմնարկներ՝ օրենքին եւ սույն կանոնադրությանը համապատասխան:
76. Միությունը օտարերկրյա պետություններում մասնաճյուղեր, ներկայացուցչություններ եւ հիմնարկներ է ստեղծում մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ հիմնարկների գտնվելու վայրի՝ երկրի օրենքներին, այլ իրավական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով:
77. Ներկայացուցչություն է համարվում Միության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է Միության շահերը եւ իրականացնում դրանց պաշտպանությունը:
78. Մասնաճյուղ է համարվում Միության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչական գործառույթները:
79. Հիմնարկը Միության կողմից ստեղծված կառավարչական, սոցիալ-մշակութային կամ ոչ առեւտրային բնույթի այլ գործունեություն իրականացնող կազմակերպություն է:
80. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը եւ հիմնարկները իրավաբանական անձինք չեն եւ գործում են Միության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:
81. Միությունը ներկայացուցչություններին, մասնաճյուղերին եւ հիմնարկներին տրամադրում է գույք: Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի եւ հիմնարկների գույքը հաշվառվում է ինչպես առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Միության հաշվեկշռում:
82. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի, հիմնարկների ղեկավարները նշանակվում են Միության խորհրդի կողմից եւ գործում են Միության տնօրենի լիազորագրերի հիման վրա:
83. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը, հիմնարկները գործում են Միության անունից: Դրանց գործունեության համար պատասխանատվություն է կրում Միությունը:

X. ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

84. Միության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը, վերակազմավորումը) կատարվում է Միության համագումարի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:
85. Միության նախագահը պարտավոր է Միության վերակազմավորման մասին գրավոր տեղեկացնել Միության պարտատերերին:
86. Միության լուծարումը հանգեցնում է դրա դադարեցմանը՝ առանց իրավունքները եւ պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
87. Միությունը կարող է լուծարվել՝
1) Միության համագումարի որոշմամբ,
2) դատարանի կողմից Միության գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի կամ այլ իրավական ակտերի խախտումների հետ,
3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքում,
4) օրենքով սահմանված այլ դեպքերում,
5) Միության նախագահը պարտավոր է Միության լուծարման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:
88. Միության համագումարը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) եւ օրենքին համապատասխան՝ սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները:
Նշանակման պահից լուծարման հանձնաժողովին են անցնում Միության գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Միության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:
Լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում նրա լուծարման եւ պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից:
Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու եւ դեբիտորական պարտքն ստանալու ուղղությամբ, ինչպես նաեւ պարտատերերին տեղեկացնում է Միության լուծարման մասին:
Լուծարային հանձնաժողովը Միության լուծարումն իրականացնում է օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:
Միությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Միությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

«ՄԻՋԵԼԵՍՏԱՅԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՑԵ
02608453

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԵՌԸ

Ա

ԱՆՈՒՆԸ

ՎԱՀԱՆ ՄԻԽԱԻԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է

30.07.1980

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է

16.05.2017

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

16.05.2027

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ

011

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE	COUNTRY CODE	PASSPORT No.
P	ARM	AR0293960

SURNAME(S)
HARUTYUNYAN

NAME
VAHAN

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
30 JUL 1980

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
16 MAY 2017

DATE OF EXPIRY
16 MAY 2027

AUTHORITY
011

P<ARMHARUTYUNYAN<<VAHAN<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AR02939606ARM8007304M2705169<<<<<<<<<<<<<<<08

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ.

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

20.05.2022

Գրանցվել է Ք. Երևանում
Բալաշովի փ. 21/1 բն.20
«06» 07 2006թ.

AR 0293960

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ
UNION OF BUILDERS OF ARMENIA

ՀՇՄ 08
24.01.2025թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարար
պարոն Գ. Պապոյանին

Հարգարժան պարոն նախարար,

Շինարարական տնտեսության արդյունավետ վերահսկողության և որակի բարձրացման կարևոր օղակ են համարվում նաև առանձին գործող և շինարարական ընկերություններին պատկանող շինարարական լաբորատորիաները, որոնց հավատարմագրումը այլ ոլորտների լաբորատորիաների հետ միասին իրականացնում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումը:

Դիմելով Ձեզ, խնդրում ենք հավատարմագրման հանձնաժողովի կազմում ներգրավել նաև Հայաստանի շինարարների միության ներկայացուցչին, ինչը հնարավորություն կտա առավել մասնագիտորեն ներկայացնել շինարարական լաբորատորիաների գործունեության հնարավորությունները:

Հարգանքով՝

ՀՇՄ նախագահ՝ Վ. Հարությունյան

0002, Երևան, Բուզանդի 99
Հեռ.՝ (374 10) 50 18 27
Էլ. փոստ՝ hayshin2006@mail.ru
contact@buildersunion.am

0002, Ереван , ул. Бузанда 99
Тел.: (374 10) 50 18 27
Эл. почта: hayshin2006@mail.ru
contact@buildersunion.am

0002, Yerevan, 99 Buzand Str.
Tel.: (374 10) 50 18 27
E-mail hayshin2006@mail.ru
contact@buildersunion.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 09.11.1/1681-2025

«31» 01 2025 թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Ի պատասխան սույն թվականի հունվարի 24-ի Ձեր N ՀՇՄ 08 գրության՝ հայտնում ենք, որ Էկոնոմիկայի նախարարությունը կարևորում է համապատասխան մասնագետներին շինարարական լաբորատորիաների հավատարմագրման նպատակով «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից ձևավորվող գնահատման խմբերում ներգրավելու Ձեր առաջարկը:

Այս համատեքստում հայտնում ենք, որ անհրաժեշտ է նախապես ապահովել մասնագետների գրանցումը ԱՐՄՆԱԲ-ի կողմից վարվող տեխնիկական փորձագետների ռեեստրում: Համաձայն «Հավատարմագրման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ պահանջի՝ տեխնիկական փորձագետը տեխնիկական փորձագետների ռեեստրում գրանցված և հավատարմագրման մարմնի նշանակած անձն է, իսկ նշված ռեեստրում փորձագետներին ներառելու համար անհրաժեշտ է ԱՐՄՆԱԲ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- անձնագրի պատճեն,
- սոցիալական քարտի պատճեն,
- աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթերը (շինարարական ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ),
- բարձրագույն կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը հավաստող դիպլոմի պատճեն,

- վերապատրաստման, որակավորման վկայականների պատճենները,
- ինքնակենսագրությունը (CV):

Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո որակավորման հանձնաժողովի կողմից կուսումնասիրվեն հավակնորդների փաստաթղթային փաթեթները և ԱՐՄՆԱԲ-ի կողմից հաստատված «K-05 Որակավորման հանձնաժողովի գործունեության կարգ»-ի համաձայն որոշում կկայացվի նրանց՝ տեխնիկական փորձագետների ռեեստրում ներառելու վերաբերյալ:

/

Հարգանքով՝ Recoverable Signature X ՆԱՐԵԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷԴԳԱՐ ՉԱՔԱՐՅԱՆ

Signed by: ZAKARYAN EDGAR 1710840439

Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժին, 011597166
Կատարող՝ Աննա Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ
UNION OF BUILDERS OF ARMENIA

ՀՇՄ 192
12.11.2025թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Գևորգ Պապոյանին

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Ի լրումն մեր՝ առ 11.11.2025թ. ՀՇՄ 190 գրության, հայտնում ենք, որ Հայաստանի շինարարների միության անդամ կազմակերպությունների՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ), «Արփա-Սևան» ԲԲԸ-ի և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի տեխնիկական մասնագետները ներառված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության հավատարմագրման ազգային մարմնի ռեեստրում:

Հարգանքով՝

ՀՇՄ նախագահ՝ Վ. Հարությունյան

0002, Երևան, Բուզանդի 99
Հեռ.՝ (374 10) 50 18 27
Էլ. փոստ՝ contact@buildersunion.am

0002, Ереван , ул. Бузанда 99
Тел.: (374 10) 50 18 27
Эл. почта: contact@buildersunion.am

0002, Yerevan, 99 Buzand Str.
Tel.: (374 10) 50 18 27
E-mail : contact@buildersunion.am